Փաստաթուղթը տրամադրվել է ԿոնսուլտանտՊլյուսի կողմից

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
10 հոկտեմբերի 2014 թ. N 78

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշման խմբագրմամբ)

Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետին և 20-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը պետությունների ղեկավարների մակարդակով որոշել է՝

1. Հաստատել կից ներկայացվող Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթը:

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության 2015 թվականի բյուջեի ձևավորման և կատարման ընթացքում օգտագործվում են Ռուսաստանի Դաշնության բյուջետային դասակարգման պետական կառավարման հատվածի գործառնությունների դասակարգման ծածկագրերը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից

Հաստատված է
Եվրասիական տնտեսական բարձրագույն
խորհրդի
10 հոկտեմբերի 2014 թ. N 78 որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկը
(Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշման խմբագրմամբ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթը սահմանում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) բյուջեի ձևավորման և կատարման, ինչպես նաև Միության բյուջեի կատարողականի նախապատրաստման կարգը:

2. Սույն Հիմնադրույթի նպատակների համար օգտագործվում են հասկացություններ, որոնք նշանակում են հետևյալը՝

«Միության բյուջեի կառավարիչ»՝ Միության մարմին, որն իրականացնում է Միության բյուջեի նախագծի ձևավորում, Միության բյուջեի կատարողականի նախագծի նախապատրաստում և ամփոփ բյուջետային ցուցակի վարում.

«Միության բյուջե»՝ Միության գործունեության ֆինանսական ապահովման համար նախատեսված դրամական միջոցների ձևավորման և ծախսման ձև.

«բյուջետային հաշվետվություն»՝ եկամուտների և ծախսերի մասով Միության բյուջեի կատարման մասին տվյալներ, որոնք ձևավորվում են միջոցներ տնօրինողների (ստացողների) կողմից.

«բյուջետային ցուցակ»՝ ծախսերի մասով Միության բյուջեի կատարման նպատակով ամփոփ բյուջետային ցուցակի հիման վրա միջոցներ տնօրինողի (ստացողի) կողմից կազմվող փաստաթուղթ.

«Միության մարմնի բյուջեի նախահաշիվ»՝ ծախսերի գերատեսչական կառուցվածքի կազմում հաստատված միջոցներ, որոնք որոշում են Միության մարմնի ծախսերի ծավալը.

«բյուջետային հաշվառում»՝ եկամուտների և ծախսերի մասով Միության բյուջեի կատարման մասին փաստագրված համակարգված տեղեկատվության ձևավորում և դրա հիման վրա բյուջետային հաշվետվությունների կազմում.

«ծախսերի գերատեսչական կառուցվածք»՝ Միության բյուջեի ծախսերի բաշխում՝ ըստ միջոցներ տնօրինողների (ստացողների) և ըստ Միության բյուջետային դասակարգման ծածկագրերի.

«Միության բյուջեի եկամուտներ»՝ Միության բյուջե մուտքագրվող դրամական միջոցներ.

«այլ մուտքեր»՝ բանկի հաշիվներում ժամանակավորապես ազատ միջոցների տեղաբաշխման արդյունքում գոյացած միջոցներ, բանկային հաշվի մասին պայմանագրով հաշվեգրվող տոկոսներ, ակտիվների իրացումից, չկատարված պայմանագրային պարտավորություններով տուգանքների և տույժերի գումարների մուտքերից, դատական հայցերով փոխհատուցումների գումարների և ապահովագրական հատուցումների գումարների և այլ մուտքեր.

«Միության մարմիններ»՝ Միության մշտապես գործող մարմիններ, որոնց գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին.

«պատասխանատու վարչություն»՝ Միության բյուջեի կառավարչի կառուցվածքային ստորաբաժանում, որին վերապահված են Միության բյուջեի նախագծի ձևավորման, Միության բյուջեի կատարողականի նախագծի նախապատրաստման և ամփոփ բյուջետային ցուցակի վարման գործառույթները.

«Միության բյուջեի կատարողական»՝ հաշվետու ֆինանսական տարում եկամուտների և ծախսերի մասով Միության բյուջեի կատարման մասին փաստաթուղթ.

«հաշվետու ֆինանսական տարի»՝ ընթացիկ ֆինանսական տարվան նախորդող տարին.

«հերթական ֆինանսական տարի»՝ ընթացիկ ֆինանսական տարվածը հաջորդող տարին.

«միջոցներ տնօրինող (ստացող)»՝ Միության մարմին, որը մասնակցում է Միության բյուջեի նախագծի միավորմանը, Միության բյուջեի կատարողականի նախագծի նախապատրաստմանը և իրականացնում է բյուջետային ցուցակին համապատասխան Միության բյուջեի միջոցների ծախսում.

«Միության բյուջեի ծախսեր»՝ Միության բյուջեից վճարվող դրամական միջոցներ.

«ամփոփ բյուջետային ցուցակ»՝ Միության բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխման մասին փաստաթուղթ, որը կազմվում է Միության բյուջեի կառավարչի կողմից միջոցներ տնօրինողների (ստացողների) կտրվածքով.

«Միության բյուջեի հաշիվներ»՝ Միության բյուջեի եկամուտների մուտքի և Միության մարմինների հաշիվներին դրամական միջոցների հետագա փոխանցման համար Միության բյուջեի կառավարչի կողմից բացված հաշիվներ:

«Միության մարմինների հաշիվներ»՝ Միության բյուջեի ծախսերին, այդ թվում՝ Միության անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտի համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերին առնչվող գործառնությունների իրականացման և այլ մուտքերի հաշվառման համար միջոցներ տնօրինողի (ստացողի) կողմից բացված հաշիվներ:
(Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշման խմբագրությամբ)

«ընթացիկ ֆինանսական տարի»՝ այն տարին, որում իրականացվում է Միության բյուջեի կատարումը և հերթական ֆինանսական տարվա համար Միության բյուջեի ձևավորումը.

«լիազոր մարմիններ» Միության անդամ պետությունների գործադիր իշխանության մարմիններ, որոնց վերապահված են ազգային բյուջեների ձևավորման և կատարման գործառույթները:

3. Միության բյուջեն պետք է հավասարակշռված լինի եկամուտների և ծախսերի առումով:

4. Միության բյուջեն հաստատվում է մեկ ֆինանսական տարվա համար, որը համապատասխանում է օրացուցային տարվան և տևում հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

5. Միության բյուջեի հաշվարկման արժույթը Ռուսաստանի Դաշնության արժույթն է՝ ռուսական ռուբլին:

6. Միության բյուջեի կառավարիչը Եվրասիական տնտեսական հանձնաժողովն է (այսուհետ՝ Հանձնաժողով):

II. Միության բյուջեի կառուցվածքը

7. Միության բյուջեն բաղկացած է եկամտային և ծախսային մասերից:

8. Միության բյուջեի եկամուտները ձևավորվում են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) բաժնեմասային վճարների հաշվին, որոնց չափերը սահմանվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ):

9. Միության բյուջեի ծախսերն ուղղվում են՝

Միության մարմինների գործունեության ֆինանսավորմանը.

Բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի (այսուհետ՝ Միջկառավարական խորհուրդ), Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացմանը.

անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտի համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրմանը:
(պարբերությունը լրացվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշմամբ)

10. Միության բյուջեն ներառում է տեքստային հոդվածներ, Միության բյուջեի եկամուտների կառուցվածքը և Միության բյուջեի ծախսերի գերատեսչական կառուցվածքը:

III. Միության բյուջետային դասակարգում

11. Միության բյուջետային դասակարգումը Միության բյուջեի եկամուտների և ծախսերի համակարգված խմբավորում է՝ դասակարգման օբյեկտներին խմբավորող ծածկագրերի շնորհմամբ, որն ապահովում է Միության բյուջեի ցուցանիշների համադրելիությունը:

12. Միության բյուջետային դասակարգումն օգտագործվում է Միության բյուջեի, Միության մարմինների բյուջեների նախահաշիվների ձևավորման և կատարման համար, ինչպես նաև Միության բյուջեի կատարման մասին հաշվետվության նախապատրաստման և բյուջետային հաշվետվությունների կազմման համար:

13. Միության բյուջետային դասակարգումը ներառում է Միության բյուջեի եկամուտների դասակարգումը և Միության բյուջեի ծախսերի դասակարգումը:

14. Միության բյուջետային դասակարգման կազմը և կառուցվածքը, ներառյալ Միության բյուջեի եկամուտների բյուջետային դասակարգան և Միության բյուջեի ծախսերի բյուջետային դասակարգման ծածկագրերի անվանումները, հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

15. Միության բյուջետային դասակարգման կիրառման կարգի մասին նշումները հաստատվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից:

IV. Միության բյուջեի ձևավորման կարգը

16. Միության բյուջեն հիմնված է՝

եկամուտների և ծախսերի արտացոլման և հավասարակշռվածության ամբողջականության.

հավաստիության և թափանցիկության.

հասցեականության և նպատակային բնույթի.

բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքների վրա:

17. Միության հերթական ֆինանսական տարվա բյուջեի ձևավորումն իրականացվում է պատասխանատու վարչության կողմից Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հիման վրա, որոնք ներկայացվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվող կարգով:

18. Միության բյուջեի նախագծի նախապատրաստումն իրականացվում է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերին, Միության իրավունքին և Միության մարմինների ակտերին համապատասխան:

Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի նախապատրաստումն իրականացվում է Միության ակտերի հիման վրա, որոնք սահմանում են Միության մարմինների անձնակազմի առավելագույն թվաքանակը, աշխատանքի վարձատրության կարգը, անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտներում համատեղ կոոպերացիոն նախագծերն իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրման կարգը և այլն, ինչպես նաև Միության մարմինների ակտերի հիման վրա, որոնք կարգավորում են նյութական և

սոցիալական ապահովության, գործուղումների, գիտահետազոտական աշխատանքների կատարման, Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի և Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման, Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի գործունեության և զարգացման ծախսերի ֆինանսավորման հարցեր:
(Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշման խմբագրությամբ)

19. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների հետ համաձայնեցվելուց հետո Միության բյուջեի նախագիծը՝ կից բացատրական գրությամբ, հիմնավորող փաստաթղթերով և ըստ ծախսային հոդվածների հաշվարկներով պատասխանատու վարչության կողմից ուղարկվում է լիազոր մարմինների քննարկմանը ոչ ուշ, քան ընթացիկ ֆինանսական տարվա ապրիլի 1-ին:

20. Լիազոր մարմիններն ուղարկում են պատասխանատու վարչությանը Միության բյուջեի նախագծին առնչվող դիտողություններն ու առաջարկները Միության մարմինների հետ համատեղ հետագա լրամշակման համար:

21. Պատասխանատու վարչության կողմից սույն հիմնադրույթի 20-րդ կետին համապատասխան լրամշակված Միության բյուջեի նախագիծը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից ուղարկվում է անդամ պետությունների կառավարությունների քննարկմանը:

22. Անդամ պետությունների կառավարությունների կողմից քննարկվելուց հետո Միության բյուջեի լրամշակված նախագիծը ներկայացվում է Հանձնաժողովի կոլեգիայի նիստին:

Հանձնաժողովի կոլեգիայի նիստում քննարկվելուց հետո Միության բյուջեի նախագիծը ներկայացվում է Հանձնաժողովի խորհրդի և Միջկառավարական խորհրդի հավանությանը:

23. Միջկառավարական խորհրդի հավանությունը ստանալուց հետո Միության բյուջեի նախագիծը ներկայացվում է Բարձրագույն խորհրդի հաստատմանը:

V. Միության բյուջեի կատարման կարգը

24. Միության բյուջեի հաստատման մասին որոշում ընդունելուց հետո Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը մեկ ամսվա ընթացքում հաստատում է ամփոփ բյուջետային ցուցակը:

Ամփոփ բյուջետային ցուցակի հիման վրա միջոցներ տնօրինողները (ստացողները) կազմում և հաստատում են բյուջետային ցուցակը:

Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ցուցակի և միջոցներ տնօրինողների (ստացողների) կողմից՝ բյուջետային ցուցակի կազմման և վարման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից:

25. Անդամ պետությունների կողմից Միության բյուջեի հաշիվներ վճարների փոխանցումն իրականացվում է, որպես կանոն, ամսական կտրվածքով, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, Ռուսաստանի Դաշնության արժույթով (ռուսական ռուբլով) կամ ազատ շրջանառվող արժույթով (ԱՄՆ դոլարով):

26. ԱՄՆ դոլարով փոխանցված միջոցների հաշվառումն իրականացվում է ռուսական ռուբլով՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու՝ Միության բյուջեի հաշիվներին միջոցների մուտքի օրվա դրությամբ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքով:

27. Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը եռամսյակային կտրվածքով տեղեկացնում է անդամ պետությունների կառավարություններին վճարների փոխանցման լիարժեքության մասին:

28. Անդամ պետությունների կողմից ընթացիկ ֆինանսական տարում վճարների սահմանված ծավալներից ավելի փոխանցված միջոցներն այդ պետությունների հետ համաձայնեցմամբ հաշվեգրվում են Միության բյուջե որպես հերթական ֆինանսական տարվա

համար նրանց բաժնեմասային վճարները:

29. Անդամ պետությունների կողմից ընթացիկ ֆինանսական տարում չփոխանցված վճարները ենթակա են պարտադիր մարման հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում և համարվում են անդամ պետության համապատասխան ֆինանսական տարվա պարտք:

30. Անդամ պետությունների կողմից վճարների մարման մասով պարտքի մարման կարգը սահմանում է Բարձրագույն խորհուրդը:

31. Միության բյուջեի հաշիվներից Միության մարմինների հաշիվներ դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ցուցակին համապատասխան Միության բյուջեի հաշիվներին միջոցների մուտքագրման օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

Անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտներում համատեղ կոոպերացիոն նախագծերի իրականացման ժամանակ ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից Ռուսաստանի Դաշնության արժույթով՝ ռուսական ռուբլով, Հանձնաժողովի հաշիվներից, Միության բյուջեի ծախսերին առնչվող գործառնությունների իրականացման համար:
(պարբերությունը լրացվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշմամբ)

32. Միության բյուջեի կատարման ընթացքում Միության բյուջեի կառավարիչն իրավունք ունի փոփոխություններ կատարել ամփոփ բյուջետային ցուցակում Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսային հոդվածների միջև բյուջեի ծախսերի վերաբաշխման մասով, բացի աշխատավարձից և անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտներում համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրումից, այս հոդվածներով հաստատված ծախսերի ընդհանուր ծավալի 10 տոկոսի սահմաններում:
(Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշման խմբագրությամբ)

Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսային հոդվածների միջև այդ հոդվածներով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 10 տոկոսից ավել չափով Միության բյուջեի ծախսերի վերաբաշխումը միջոցներ տնօրինողների (ստացողների) միջև, ինչպես նաև աշխատավարձի ծախսային հոդվածի կիրառմամբ իրականացվում է Միության բյուջեում փոփոխություններ կատարելու մասին Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա:

Անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտների համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրման համար նախատեսված Միության բյուջեի միջոցներն օգտագործվում են միայն նշված նպատակների համար և չեն կարող վերաբաշխվել Միության բյուջեով նախատեսված այլ ծախսային հոդվածների ֆինանսավորման համար:
(պարբերությունը լրացվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշմամբ)

33. Միության մարմինների ղեկավարներն իրավունք ունեն որոշումներ ընդունել աշխատանքի վարձատրության համար նախատեսված տնտեսված դրամական միջոցները Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, Միության համապատասխան մարմնի պաշտոնատար անձանց և աշխատակիցների նյութական խրախուսմանն ուղղելու մասին:

34. Միության հերթական ֆինանսական տարվա բյուջեն մինչև ընթացիկ ֆինանսական տարվա ավարտը չհաստատելու դեպքում Միության մարմինների գործունեության ֆինանսավորումը մինչև Միության հերթական ֆինանսական տարվա բյուջեի հաստատումն իրականացվում է անդամ պետությունների կողմից ամեն ամիս առավելագույնը հաշվետու

ֆինանսական տարում նրանց փաստացի ֆինանսավորման մեկ տասներկուերորդի չափով:

35. Միության մարմինների հաշիվներում հերթական ֆինանսական տարվա հունվարի 1-ի դրությամբ գոյացած բյուջետային միջոցների մնացորդները, որոնք նախատեսված են ընթացիկ տարում վարկային պարտքի մարման, հիմնական միջոցների ձեռք բերման և Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման համար, պահպանում են իրենց նպատակային բնույթը և օգտագործվում Միության մարմինների կողմից հերթական ֆինանսական տարվա առաջին կիսամյակում որպես լրացուցիչ ֆինանսավորում՝ Միության մարմինների հերթական ֆինանսական տարվա բյուջետային նախահաշիվներով նախատեսված ծախսերից ավել, հետագայում նշված գործառնություններն արտացոլելով բյուջետային հաշվետվություններում:

Միության մարմինների հաշիվներում հերթական ֆինանսական տարվա հունվարի 1-ի դրությամբ գոյացած բյուջետային միջոցների մնացորդները, որոնք նախատեսված են անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտների համատեղ կոոպերացիոն նախագծեր իրականացնելիս ֆինանսական աջակցության տրամադրման համար, պահպանում են իրենց նպատակային բնույթը և օգտագործվում հերթական ֆինանսական տարում որպես լրացուցիչ ֆինանսավորում՝ Միության հերթական ֆինանսական տարվա բյուջեում Հանձնաժողովի կողմից նախատեսված ծախսերից ավել՝ հետագայում նշված գործառնություններն արտացոլելով բյուջետային հաշվետվություններում:
(պարբերությունը լրացվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 25.12.2023 թ. N 17 որոշմամբ)

36. Միության մարմինների հաշիվներում հերթական ֆինանսական տարվա հունվարի 1-ի դրությամբ գոյացած բյուջետային միջոցների մնացորդները, բացի սույն Հիմնադրույթի 35-րդ կետում նշված բյուջետային միջոցների մնացորդներից, ինչպես նաև այլ մուտքեր, հաշվի առնելով դեբիտորական պարտքի առկայությունը, ենթակա են հաշվանցման Միության բյուջե անդամ պետությունների բաժնեմասային վճարների հաշվին՝ նրանց կողմից ընթացիկ ֆինանսական տարում փաստացի կատարված փոխանցումների ծավալներին համաչափ:

37. Ընթացիկ ֆինանսական տարում Միության մարմնի լուծարման մասին որոշում ընդունելու և նրա իրավահաջորդի բացակայության դեպքում Միության մարմնի հաշիվներին մնացած միջոցները լուծարման ընթացակարգերի հետ կապված հաշվարկների ավարտից հետո ենթակա են վերադարձման անդամ պետություններին՝ նրանց կողմից ընթացիկ ֆինանսական տարում Միության լուծարվող մարմնի ֆինանսավորման համար նրանց կողմից փաստացի կատարված փոխանցումների ծավալներին համաչափ:

VI. Միության բյուջեի կատարողականի նախապատրաստման կարգը

38. Միության բյուջեի բոլոր եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև Միության բյուջեի կատարման ընթացքում իրականացվող գործառնությունները ենթակա են բյուջետային հաշվառման, որի ընդհանուր սկզբունքները հաստատվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից:

39. Միության բյուջեի կատարողականի նախագծի նախապատրաստումն իրականացվում է պատասխանատու վարչության կողմից միջոցներ տնօրինողների (ստացողների) բյուջետային հաշվետվությունների հիման վրա, որը ներկայացվում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվող կարգով:

Բյուջետային հաշվետվությունները ձևավորվում են բյուջետային հաշվառման տվյալների հիման վրա:

40. Պատասխանատու վարչությունը ներկայացնում է Միության բյուջեի կատարողականի նախագիծը լիազոր մարմինների քննարկմանը մինչև հաշվետու ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը:

Միության բյուջեի կատարողականի կազմում, ի թիվս այլնի, ներառվում է բացատրական գրություն, որը պարունակում է Միության բյուջեի տեքստային հոդվածների, եկամուտների և ծախսերի մասով Միության բյուջեի կատարման վերլուծություն, ինչպես նաև տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածում Միության մարմինների փաստացի թվաքանակի մասին:

41. Լիազոր մարմիններն ուղարկում են պատասխանատու վարչությանը Միության բյուջեի կատարողականի նախագծին վերաբերող դիտողություններ և առաջարկներ:

42. Պատասխանատու վարչությունը՝ հաշվի առնելով լիազոր մարմինների դիտողություններն ու առաջարկները, Միության մարմինների հետ համատեղ լրամշակում է Միության բյուջեի կատարողականի նախագիծը և ներկայացնում Հանձնաժողովի կոլեգիայի նախագահին Հանձնաժողովի կոլեգիայի նիստում քննարկելու համար:

43. Հանձնաժողովի կոլեգիայի նիստում քննարկվելուց հետո Միության բյուջեի կատարողականի նախագիծը ներկայացվում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը՝ Միջպետական խորհրդի հավանությանը հետագա ներկայացման համար:

44. Միջկառավարական խորհրդի հավանությունը ստանալուց հետո Միության բյուջեի կատարողականի նախագիծը ներկայացվում է Բարձրագույն խորհրդի հաստատմանը:

VII. Ֆինանսական վերահսկողություն

45. Սույն Հիմնադրույթի նպատակների համար նախատեսվում են ֆինանսական վերահսկողության հետևյալ ձևերը՝

նախնական ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է Միության բյուջեի նախագծի ձևավորման փուլում՝ Միության մարմինների ծախսերի արդյունավետության որոշման և Միության բյուջեի ծախսերի օպտիմալացման նպատակով բյուջետային միջոցներ ստացողների բյուջետային նախահաշիվների նախագծերի քննարկման ընթացքում.

ընթացիկ ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է Միության բյուջեի կատարման ընթացքում՝ Միության մարմիններին բյուջետային միջոցներ հատկացնելիս, ինչպես նաև եկամուտների մուտքի ընթացքում՝ Միության մարմինների բյուջետային միջոցների ոչ արդյունավետ և ոչ նպատակային ծախսումը կանխելու նպատակով.

հետագա ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է հատկացված բյուջետային միջոցները ստացողների կողմից փաստացի օգտագործումից հետո՝ Միության բյուջեի կատարողականի քննարկման և հաստատման ընթացքում:

46. Միության մարմիններում ֆինանսական վերահսկողությունը բաժանվում է արտաքին աուդիտի (վերահսկողության) և Միության բյուջեի կատարման վերահսկողության (արտաքին և ներքին):

47. Արտաքին աուդիտը (վերահսկողությունն) իրականացվում է Միության բյուջեի ձևավորման, կառավարման և միջոցների տնօրինման արդյունավետության, Միության գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետության որոշման նպատակով: Արտաքին աուդիտը (վերահսկողությունը) իրականացվում է տեսուչների խմբի կողմից, որը ձևավորվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ներկայացուցիչներից:

Միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության) մասին հիմնադրույթը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից: Արտաքին աուդիտի (վերահսկողության) ստանդարտները և մեթոդաբանությունը որոշվում են անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից:

Միության մարմիններում իրականացված արտաքին աուդիտի (վերահսկողության)

արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են Բարձրագույն խորհրդի նիստում քննարկման համար:

48. Միության բյուջեի կատարման նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնելու համար առնվազն 2 տարին մեկ անգամ անցկացվում է Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում (այսուհետ՝ վերստուգում):

Որևէ անդամ պետության նախաձեռնությամբ ստուգումներ կարող են անցկացվել Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության առանձին հարցերով (այսուհետ՝ ստուգում):

Վերստուգումներն ու ստուգումներն իրականացվում են վերստուգողների խմբի կողմից, որը բաղկացած է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության մարմինների ներկայացուցիչներից:

Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության մարմինների վերստուգման մասին հիմնադրույթը, Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման ստանդարտները և մեթոդաբանությունը հաստատվում են Միջկառավարական խորհրդի կողմից: Վերստուգումներ և ստուգումներ անցկացնելու մասին որոշումը՝ դրանց անցկացման ժամկետների սահմանմամբ, ընդունվում է Միջկառավարական խորհրդի կողմից:

Անցկացված վերստուգումների և ստուգումների արդյունքներն ուղարկվում են անդամ պետությունների կառավարություններին՝ սահմանված կարգով Միջկառավարական խորհրդի նիստում քննարկման համար հետագա ներկայացմամբ:

49. Միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողությունն իրականացվում է Միության մարմինների կողմից այն կարգով, որի ընդհանուր սկզբունքները հաստատվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից:

50. Միության մարմինների կողմից արտաքին աուդիտի (վերահսկողության) ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման կարգը որոշվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Միության մարմինների կողմից վերստուգումների և ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման կարգը որոշվում է Միջկառավարական խորհրդի կողմից: